Արձանագրություն N 4
ՋԿ-ԲՄԽԾՁԲ-22/6-Ն ծածկագրով ընթացակարգի
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 10 հունվարի 2023թ.

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Խ. Ծառուկյանը (ԳԱՊ)

Հանձնաժողովի անդամներ Բ. Զաքարյանը, Ա. Սիմոնյանը, Ն. Ավետյանը, Մ. Վարդանյանը և Ս. Ալեքսանյանը

Քարտուղար՝ Ա. Սարգսյանը:

Հայտերի բացման վերաբերյալ

Ջրային կոմիտեի կարիքների համար ՀՀ Սյունիքի մարզում Լիճքի ջրամբարի կառուցման և ՀՀ Շիրակի մարզում Արթիկի ջրամբարի վերակառուցման նախագծերի պատրաստման, ծախսերի գնահատման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման ՋԿ-ԲՄԽԾՁԲ-22/6-Ն ծածկագրով ընթացակարգի հայտերը էլեկտրոնային ձևով www.armeps.am կայքի միջոցով բացվել են 2022 թվականի դեկտեմբերի 26-ին, ժամը 16:00-ին /հրապարակումը՝ 24.11.2022թ./:

Ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիմքով:

ՋԿ-ԲՄԽԾՁԲ-22/6-Ն ծածկագրով ընթացակարգին մասնակցության հայտ է (են) ներկայացրել հետևյալ մասնակից (ները)

Մասնակցի անվանումը	հասցե, հեռախոսահամար	Էլեկտրոնային հասցե
«Մոդուլ ՍՊԸ	ՀՀ, ք Երևան, Նաիրի Զարյան 22-3, հեռ. (+374) 11 201-511	info@modul.am
Աբան Փաժուհ խորհրդատվական ինժեներական ընկերություն /AbanPazhouh Consulting Engineers Compan/	համար 175 Դադման պողոտա, Շահրաքէ Ղարբ շրջան, Թեհրան, Իրան հեռ. +98-21-88368593, 094766332	**info@abanpazhouh.ir** aban_pazhouh@yahoo.com

Մասնակցի (ների) գնային առաջարկը

ՀՀ դրամ

	Մասնակցի անվանումը	Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գինը
Չափաբաժին 1 Նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում - ՀՀ Շիրակի մարզում Արթիկի ջրամբարի վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություններ պլանավորված (կանխատեսվող) գնման ընդհանուր գին 174 000 000				
1	Աբան Փաժուհ խորհրդատվական ինժեներական ընկերություն	130 000 000	26 000 000	156 000 000
Չափաբաժին 2 Նախագծերի պատրաստում, ծախսերի գնահատում - ՀՀ Սյունիքի մարզում Լիճքի ջրամբարի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայություններ				

1	«Մոդուլ ՍՊԸ	132 000 000	26 400 000	158 400 000
2	Աբան Փաժուի խորհրդատվական ինժեներական ընկերություն	130 000 000	26 000 000	156 000 000

Մասնակից(ներ)ի կողմից ներկայացված բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայությունը և յուրաքանչյուր հայտի փաստաթղթերի համապատասխանությունը հրավերի պահանջներին

ՋԿ-ԲՄԽԾՁԲ-22/6-Ն ծածկագրով ընթացակարգի

Մասնակից <<Մոդուլ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում.

- իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը՝ Հավելված 1.3-ը լրացված է ՋԿ-ԲՄԽԾՁԲ-22/6-Ն ծածկագրով հրավերով (այսուհետ՝ Հրավեր) սահմանված հայտարարագրի լրացման կարգին անհամապատասխան /օր.՝ կետեր 1.2, 1.3/,
- հիմնական աշխատակազմում ներառված մասնագետների և ոչ հիմնական փորձագետներ՝ Հավելված 1.2-ը հաստատված չէ էլեկտրոնային ստորագրությամբ,
- առաջադրված հիմնական աշխատակազմում ներգրավված մասնագետ՝ Գյունտեր Ռեդմերի հաստատած գրավոր համաձայնության /մատուցվելիք ծառայություններում վերջիններիս ներգրավվելու մասին/ ստորագրության դիմաց նշված է այլ անձի անուն ազգանուն,
- առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետ՝ Ա. Մարտիրոյանի հաստատած գրավոր համաձայնությունը՝ մատուցվելիք ծառայություններում վերջիններիս ներգրավվելու մասին բացակայում է, ինչպես նաև CV-մասնագետի ռեզյումեն ստորագրված չէ,
- առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետ՝ Վ. Ղարբյանի փաստաթղթերը բացակայում են,
- Հավելված 1.2-ում ներկայացված մասնագետներից առանձնացված չէ գնահատման ենթակա մասնագետներին, քանի որ նշված Հրավերով գնահատման ենթակա են մասնագետներից մեկական մասնագետ (չնայած մասնակիցը իրավունք ունի ներկայացնել լրացուցիչ մասնագետներ),
- ծառայության մատուցման մեթոդաբանություն, որը կներառի աշխատանքային ծրագրի ժամանակացույց՝ Հավելված 1.5-ում ներկայացված ծառայությունների մատուցման ժամանակացույցը չի համապատասխանում Հրավերով սահմանված (ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ) ժամանակացույցին, որը կազմում է 12 ամիս, ինչպես նաև ներկայացված ծրագրի իրականացման պլանը չի համապատասխանում Հրավերով նշված առաջադրանքի դրույթներին (մասնավորապես հողերի ձեռքբերում, վերաբնակեցում և ՇՄԱԳ փորձաքննություն):

Մասնակից Աբան Փաժուի խորհրդատվական ինժեներական ընկերության կողմից ներկայացված հայտում բացակայում է.

- առաջարկվող աշխատակազմի վերաբերյալ տվյալները՝ համաձայն Հավելված 1.2-ի և նրանց վերաբերյալ Հրավերով պահանջվող փաստաթղթերը (Հրավերի 2.4.1 և **2.** ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՅՏԸ 2.1.3 կետեր)

Մասնակից Աբան Փաժուի խորհրդատվական ինժեներական ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերում.

- ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությունը՝ համաձայն հավելված N1-ի, լրացված է սխալ (նշված է 1,2,3,4,5 չափաբաժիններ, սակայն Հրավերը բաղկացած է 1 և 2 չափաբաժիններից),
- ծառայության մատուցման մեթոդաբանություն, որը կներառի աշխատանքային ծրագրի ժամանակացույց՝ Հավելված 1.5-ում ներկայացված ծառայությունների մատուցման ժամանակացույցը չի համապատասխանում Հրավերով սահմանված (ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ) ժամանակացույցին, որը կազմում է 12 ամիս (Ընկերության կողմից ներկայացվել է 16 ամիս):

Ծանոթություն

Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում մասնակիցը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի հավաստագիրը պետք է զետեղված լինի «Նույնականացման քարտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով տրամադրված նույնականացման քարտում, կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնա¬կիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստա¬թղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրա¬պետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Մասնակից ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության վերաբերյալ

«ՋԿ-ԲՄԽԾՁԲ-22/6-Ն» ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակիցների հայտում արձանագրվել են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ:

Հանձնաժողովի որոշում.

Համաձայն «ՋԿ-ԲՄԽԾՁԲ-22/6-Ն» ծածկագրով ընթացակարգի 8.9 կետի՝ հանձնաժողովը 11.01.2023թ. մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը և մասնակիցներին առաջարկում մինչև կասեցման ժամկետի ավարտը՝ այն է 12.01.2023թ. շտկել անհամապատասխանությունները:

Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 13.01.2023թ. ժամը 17:00-ին, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա, նիստերի դահլիճ:

Ընդունվել է որոշում՝ կողմ-6, դեմ-0

Գնահատող հանձնաժողովի՝

Նախագահ	_____	Խ. Ծառուկյան
անդամներ	_____	Բ. Զաքարյան
	_____	Ա. Սիմոնյան
	_____	Ն. Ավետյան
	_____	Մ. Վարդանյան
	_____	Ս. Ալեքսանյան
Քարտուղար	_____	Ա. Սարգսյան